

ՆԻԿՈԼ ԴՈՒՄԱՆԻ «ՆԱՄԱԿԱՆԻ»-Ն*

Բանալի բառեր – Նիկոլ Դուման, ՀՅ Դաշնակցություն, Ատրպատական, Խանասորի արշավանք, Երևանի նահանգ, Նախիջևանի աղետ, Մրգաստանի կենտրոնական կոմիտե, շրջաբերական, ուղեցույց, փորձ:

Տարեկգրին «Վէմ Մատենաշարով» լույս է տեսել ՀՅ Դաշնակցության մարտական կազմակերպության առաջին սերնդի ամենավառ ներկայացուցիչ, ականավոր հայդուկապետ Նիկոլ Դումանի նամակներն ու գրություններն ամփոփող փաստաթղթերի ժողովածուն¹, որը ՀՅԴ արխիվների լավագույն գիտակ երվանդ Փամբուկյանի երկարամյա աղբյուրագիտական պրպտումների արգասիքն է:

Ժողովածուն ներառում է Նիկոլ Դումանի նամակները, «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան»² գրքույկը և ոչ շատ, բայց արժեքավոր գրություններ, լուսանկարներ և այլ նշխարներ:

Մեծ հայդուկապետ Նիկոլ Դումանը «գրչի մարդ» չէր: Սակայն որպես Շուշիի թեմական դպրոցի շրջանավարտ աչքի էր ընկնում ոչ միայն գիտելիքների հարուստ պաշարով, այլև քաղաքական իրադարձությունները խորապես ընկալելու ունակությամբ: Ուստի Նիկոլ Դումանի «Նամականի»-ն, աղբյուրագիտական արժեք ունեցող պատմական վավերագրերից բացի, նաև անցյալի մարտական փորձի ու հմտությունների հարուստ շտեմարան է Հայրենիքի պաշտպանության գործով մտահոգ ներկա սերնդի համար:

Դեռևս 1890-ականներին իրանական Ատրպատականում իր առաջին կառույցները ստեղծած և սպա Արևմտյան Հայաստան թափանցած ՀՅ Դաշնակցության անվանի հայդուկների շարքում Նիկոլ Դումանն առանձնանում էր առավել բարձր մարտական որակներով, ուստի վայելում էր կուսակցության Հիմնադիր սերնդի ու հատկապես Քր. Միքայելյանի անվերապահ վստահությունը: Այդ առումով հատկանշական է նրա առանցքային դերակատարությունը Ատրպատականի տարածքից հայ հայդուկների ձեռնարկած ամենախոշոր ռազմագործողության՝ 1897 թ. Խանասորի արշավանքի կազմակերպման գործում:

*Ընդունվել է տպագրության 10.06.2021:
¹ Տե՛ս **Նիկոլ Դուման**, Նամականի, հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն եւ ծանօթագրութիւններ **Երուանդ Փամպուկեանի**, «Վէմ Մատենաշար», թիւ 3, Եր., «Լուսակն», 2021, 336 էջ:
² Նոյն տեղում, էջ 285-325:

Գրախոսվող ժողովածուում տեղ գտած՝ Նիկոլ Դումանի նամակները լույս են սփռում այդ արշավանքի մանրամասների վրա: Նիկոլ Դումանն արշավանքի կազմակերպման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը հիմնավորելու և ի վերջո այն իրականություն դարձնելու համար բավական լուրջ պայքար էր ծավալել՝ մի կողմ դնելով դրա հրամանատարը դառնալու առաջնության հարցը: Այստեղ է, որ դրսևորվեցին արցախցի անկուն հայդուկապետի մարտական ու կամային որակներն ու բնավորության հիմնական առանձնահատկությունները: Դումանը՝ որպես հայ հայդուկի արժանապատվության մարմնավորում, երբեք չէր կարող ներել 1896 թ. Վանի հունիայան նահանջի ժամանակ հայ ազատամարտի մի շարք նվիրական դեմքերի հանդեպ թուրքական իշխանությունների ու նրանց գործիքը դարձած քուրդ ցեղապետների կազմակերպած դաժան հաշվեհարդարը: Ուստի հենց նա էլ դարձավ 1890-ականների կեսերի համիդյան ջարդերից հետո ՀՅԴ-ի որդեգրած՝ հարվածին հարվածով պատասխանելու մտայնության առավել վառ արտահայտողներից մեկը: Մտայնություն, որն այսօր կարծես նորից կախվում է օդում՝ Նիկոլ Դումանի հայրենի Արցախը պատուհասած 44-օրյա պատերազմից հետո:

Գրախոսվող ժողովածուի առավել հետաքրքրական մասը 1905-1907 թթ. Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Անդրկովկասում ծավալված հայ-թաթարական արյունալի կռիվների շրջանում Երևանից Դումանի գրած նամակներն ու մարտական հրահանգներն են: Հայտնի է, որ նախքան Երևանի նահանգի ինքնապաշտպանության գործի ղեկավարությունը ստանձնելը Նիկոլ Դումանը հասցրել էր աչքի ընկնել Բաքվի փետրվարյան կոտորածին տրված ինքնաբուխ հակահարվածի կազմակերպմամբ: Սակայն 1905 թ. Երևանում նրա ծավալած գործունեությունը կարևորվում է նրանով, որ Դումանը կարողացավ բեկում մտցնել Նախիջևանի հայության դաժան կոտորածից հետո Երևանի ողջ նահանգում ստեղծված վտանգավոր դրության մեջ: Եվ եթե Նիկոլ Դումանի գործադրած արտակարգ քայլերը չլինեին, ապա Արարատյան դաշտավայրի հայության զգալի մասը նույնպես կարժանանար Նախիջևանի ճակատագրին: Այդ օրերին Դումանի գրած նամակները ցույց են տալիս, որ նա կարողացել է ձիշտ վերլուծել Նախիջևանի աղետի պատճառները և հնուտ քայլերի միջոցով ձևավորել է ինքնապաշտպանական այնպիսի համակարգ, որը թույլ տվեց չեզոքացնել Արարատյան դաշտավայրի զգալի մասում հակառակորդի ունեցած քանակական, իսկ որոշ հատվածներում՝ նաև՝ որակական առավելությունները:

Թաթարական գերակշիռ բնակչություն ունեցող Երևանի ու Նախիջևանի գավառների դաշտավայրային հատվածի հայության ինքնապաշտպանության կազմակերպման գործում անգնահատելի էր հատկապես ՀՅԴ Երևանի (Մրգաստանի) կենտրոնական կոմիտեի և Նիկոլ Դումանի՝ որպես

Զինվորական լիազորի անունից 1905 թ. հունիսի 12-ին ուղարկված մանրամասն շրջաբերականը³, որի հեղինակը հենց ինքը՝ Նիկոլ Դումանն էր: Այս շրջաբերականի հիմնական դրույթները ավելի ուշ մանրամասն հիմնավորումներ ստացան նրա «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան» գրքույկում: Սա առկա բոլոր ուժերի համախմբման ու նրանց Արարատյան դաշտավայրի առավել վտանգված հատվածներում ճիշտ տեղաբաշխելու մանրակրկիտ ծրագիր էր, որը թույլ տվեց Նիկոլ Դումանին աստիճանաբար իր ձեռքը վերցնել նախաձեռնությունը և անգամ հակահարձակում կազմակերպել Սիսիանի ու Հյուսիսային Նախիջևանի ուղղություններում: Շրջաբերականում նահանգի հայության ինքնապաշտպանության կազմակերպման համար տրվել էին բոլոր անհրաժեշտ ցուցումները՝ յուրաքանչյուր գյուղի համար հողային դիրքերի նախապատրաստում, հարևան բնակավայրերի հետ կապի ապահովում, մշտական հերթապահության կազմակերպում, մնայուն և թռուցիկ խմբերի միջև պարտականությունների բաշխում, ցարական բանակի կանոնավոր զորքերի հետ բխումներից խուսափելու եղանակներ և այլն, և այլն:

Հատկանշական է որ հետագայում Արարատյան դաշտավայրի վտանգված հայության ինքնապաշտպանության կազմակերպման այս գործնական ուղեցույցի դրույթները «բացելու» և դրանք գրքույկի վերածելու ընթացքում, Դումանը լուրջ երկմտանք է ունեցել, որը կապված էր ինչպես կուտակված մարտական հմտություններն ու մարտավարական հնարքները գաղտնի պահելու ցանկության, այնպես էլ քաղաքական նոր իրավիճակի հետ: Ուստի միանգամայն ճիշտ է նկատել սույն ժողովածուն կազմած Երվանդ Փամբուկյանը, որ որոշ ժամանակ ներկուսակցական քննարկումների առարկա դարձած «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան» գրքույկի վրա նշված հրատարակության թվականը՝ 1907-ը, լուրջ կասկածներ է հարուցում: Որպես դրա անվիճելի ապացույց՝ Երվանդ Փամբուկյանը բերում է 1909-ին Վառնայում կայացած ՀՅԴ 5-րդ Ընդհանուր ժողովի ընդունած որոշումը՝ Նիկոլ Դումանի կազմած ինքնապաշտպանության նախագծի մասին: Ժողովն անգամ հանձնախումբ էր ստեղծել Դումանի որոշ վիճելի մտքերի խմբագրման համար: Սակայն հաշվի առնելով ինքնապաշտպանության գործի կարևորությունը հայության երեք հատվածների համար, ժողովը որոշել է, «Որ ընկեր Դումանի կազմած **ուղեցույցը** հրատարակուի իրա անունով (ընդգծումը մերն է – Գ. Խ.)⁴»: Կարծում ենք՝ այս տողերից պարզ է դառնում «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան» գրքույկի հրատարակության թվականի փոփոխության գաղտնիքը, որովհետև ՀՅԴ 5-րդ Ընդհանուր ժողովի որոշման մեջ գրված է ոչ թե գրքույկի, այլ **ուղեցույցի** մասին: Ներքին օգտա-

³ Տե՛ս նույն տեղում, էջ 129-130:

⁴ Նույն տեղում, էջ 285:

գործման համար սահմանափակ քանակությամբ բազմացված նման խորհրդապահական ուղեցույցներ ՀՅԴ-ն միշտ էլ ունեցել է, իսկ Դումանի ինքնապաշտպանական նախագիծը հենց այդպիսի փաստաթուղթ էր: Ուստի հետագայում տպված գրքույկի բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ այն գրվել ու ներքին օգտագործման համար տարածվել է հենց 1907-ին՝ հայ-թաթարական կռիվների թարմ տպավորությամբ, որից հետո՝ մինչև հրատարակությունը, միայն չնչին ուղղումներ ու հավելումներ են արվել: Բայց հետագայում՝ 1910-ին հրատարակելու ժամանակ ուղեցույցի վրա դրված նախնական թվականը պահպանվել է, որովհետև ժնևում տպված գրքույկը որպես 1907 թ. հրատարակություն ներկայացնելը թերևս «...փխրուն վիճակի մէջ գտնուող Իթթիհատ-Դաշնակցութիւն փոխարաբերութիւնները...»⁵ չթունավորելու նպատակ էր հետապնդում:

Բոլոր դեպքերում ավելի քան ակնհայտ է, որ Նիկոլ Դումանի այս գրքույկի բովանդակությունը Երևանում իր իսկ կազմած 1905 թ. հունիսի 12-ի մանրամասն շրջաբերականի դրույթների զարգացումն է ու դրանց հիման վրա նրա վարած հայ-թաթարական կռիվների փորձի ամփոփումը, ինչն ապացուցվում է հայ-թաթարական կռիվների ժամանակ Անդրկովկասում ՀՅԴ ձևավորած ինքնապաշտպանական համակարգի առանձին օղակների անվանումներով:

Նիկոլ Դումանի «Նամականի»-ն հարուստ է նաև մեծ հայդուկապետի գործունեության հաջորդ հանգրվաններին վերաբերող ուշագրավ գրություններով: Մասնավորապես հետաքրքրական են Սոցիալիստական ինտերնացիոնալի 1910 թ. Կոպենհագենի կոնգրեսին Նիկոլ Դումանի մասնակցության, ինչպես նաև Իրանի Սահմանադրական հեղափոխության վերջին հանգրվանում նրա ծավալած գործունեության մանրամասներին վերաբերող նամակներն ու գրությունները:

Ներկա դժվարին ժամանակներում, երբ Արցախյան երկրորդ պատերազմից հետո ակնհայտ են դարձել բանակաշինության խորհրդային փորձի մեխանիկական յուրացման հետևանքով Հայոց բանակի ժառանգած աչք ծակող թերությունները, մենք չենք կարող հետադարձ հայացք չնետել նախորդ սերունդների մարտական փորձի վրա: Վերջին պատերազմը կրկին ցույց տվեց, որ լեռնային տեղանքում մարտական գործողություններ վարելու համար անարդյունավետ է մանավանդ հարթավայրային տեղանքին հարմարված խորհրդային բանակին բնորոշ պաշտպանական մարտավարությունը: Մինչդեռ այս ընթացքում մեր հակառակորդները հասցրել էին ուսումնասիրել նման տեղանքում գործելու՝ ՆԱՏՕ-ի բանակների հարուստ փորձը: Ժամանակին ոչ մեծ խմբերով մարտական խնդիրներ լուծած տարբեր ժողովուրդների

⁵ Նույն տեղում, էջ 286:

մարտական փորձի կողքին՝ դրանում դժվար չէ նկատել նաև Նիկոլ Դումանի «Նախագիծ ժողովրդական ինքնապաշտպանութեան» գրքույկում ներկայացված ՀՅԴ մնայուն ու թռուցիկ խմբերի մարտավարական հնարքները: Ուստի մեր գինվորականներից ոմանք այսօր ոչ առանց հիմքի պնդում են, որ այդ ամենը ՆԱՏՕ-ի շտաբներում Նիկոլ Դումանի աշխատության դրույթների հանգամանակից ուսումնասիրության արդյունքն է, ինչը յուրացրել են նաև մեր հակառակորդները, իսկ մենք, դժբախտաբար, խորհրդային բանակի փորձի պատճենումից այն կողմ չենք անցել:

ՀՅԴ մարտական խմբերի կազմակերպման ընթացքում արցախցի աննկուն հրամանատարի կազմած բազմաթիվ գրություններն ու հրահանգները 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի սկզբների հայ ազատամարտի ռազմաքաղաքական բովանդակության խտացումն են: Մեկդարյա հեռավորությունից Նիկոլ Դումանի ժառանգությունը մեզ է ներկայանում որպես ժամանակի իրադարձությունների բովում բյուրեղացած **մնայուն մարտական փորձառություն**, որը պետք է խորությամբ յուրացնի իրապես ազգային բանակ ունենալու խնդրով մտահոգ Հայրենիքի պաշտպանների նոր սերունդը:

Ուստի այսօր մեր ընթերցողները պետք է երախտագիտությամբ ընդունեն ՀՅ Դաշնակցության մարտական կազմակերպության ակունքներում կանգնած Նիկոլ Դումանի նամակներն ու գրություններն ամփոփող՝ Երվանդ Փամբուկյանի ժողովածուն՝ մեծ հայդուկապետի անանց ժառանգության մեջ փնտրելով ապագա հաղթանակների բանալիները:

Գևորգ Ս. Խուդինյան
Պատմ. գիտ. դոկտոր

Գևորգ Ս. Խուդինյան – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Հայոց Նոր պատմության առանցքային հիմնահարցերը, այդ թվում՝ հայ ազգային-ազատագրական շարժման, Հայկական հարցի և Հայաստանի Հանրապետության պատմությունը: Հրապարակել է բազմաթիվ աշխատություններ ու հոդվածներ հայ ազգային կուսակցությունների և առաջին հերթին՝ ՀՅ Դաշնակցության պատմության ու գաղափարաբանության վերաբերյալ: Զբաղվում է նաև Հայոց պատմության պատմագրության և պատմության տեսության ու մեթոդաբանության հիմնախնդիրների հետազոտությամբ:

Էլ. հասցե – khoudinyan@yahoo.com

Summary

“COLLECTION OF LETTERS” OF NIKOL DUMAN

Gevorg S. Khoudinyan

Doctor of Sciences in History

Key words – Nikol Duman, ARF Dashnaksutyun, Atrpatakan, Khanasor Expedition, Yerevan province, disaster of Nakhijevan, central committee of Mrgastan, circular, guideline, experience.

At the beginning of the current year, a collection of documents summarizing the letters and writings of the most prominent representative of the ARF Dashnaksutyun’s first generation, Armenian famous hajduk leader Nikol Duman, was published in the “Vem series” edited and annotated by **Yervand Pambukyan**.

It includes Nikol Duman’s letters, his booklet entitled “Project of People’s Self-Defense” and small but valuable writings, photographs and other relics.

The documents included in this collection, which summarize the rich chronicle of the ARF Dashnaksutyun’s military-revolutionary activity, not only have a narrow sourceological value, but also open a wide field of learning the experience and skills of the past for the current generation concerned with the defense of the Homeland.

The most interesting part of the reviewed collection is the letters and military instructions written by Duman from Yerevan during the bloody Armenian-Tatar battles in Transcaucasia during the years of the First Russian Revolution of 1905-1907.

His activities in Yerevan in 1905 are taken as important by the fact that Duman was able to make a breakthrough in the extremely dangerous situation in the entire province of Yerevan after the brutal massacre of the Armenians of Nakhichevan. And if it were not for the extraordinary steps taken by Nikol Duman, a considerable part of the Armenians of the Ararat Valley would also have met the fate of Nakhijevan. Duman’s letters in those days show that he was able to properly analyze the causes of the Nakhijevan disaster and, through skillful steps, build a system of self-defense that allowed him to neutralize the quantitative and, in some parts, qualitative advantages of the enemy in much of the Ararat Valley.

The unique legacy left by the indomitable commander from Artsakh in the field of organizing ARF combat groups, which is a specific insight of the military-

political content of the Armenian liberation war of the late 19th and early 20th centuries, from a distance of a millennium is presented to us as a timeless and lasting experience whose necessity is felt again by the new generation of defenders of the Homeland, who are really concerned about having a national army.

Резюме

«СБОРНИК ПИСЕМ» НИКОЛА ДУМАНА

Геворк С. Худинян

Доктор ист. наук

Ключевые слова - Никол Думан, АРФ Дашнакцутюн, Эриваньская губерния, Нахиджеванская катастрофа, Центральный комитет Мргастана, циркулярное письмо, руководство, опыт.

В начале этого года «Книжная серия Вэм» опубликовала сборник документов содержащих письма и записки самого яркого представителя первого поколения Боевой организации АРФ Дашнакцутюн, выдающегося руководителя армянских гайдуков Никола Думана (Николай Тер Ованнисян), под редакцией и с комментариями **Ерванда Памбукяна** (Бейрут).

Сборник представляет письма Никола Думана, его книжку «Проект народной самообороны» и небольшие, но ценные записки, фотографии и другие реликвии.

Вошедшие в сборник документы, подытоживающие богатую летопись боевой-революционной деятельности АРФ Дашнакцутюн, имеют не только сугубо источниковедческое значение, но и создают широкие возможности для сегодняшнего поколения защитников Родины по освоению боевого опыта и навыков прошлого.

В рецензируемом сборнике наиболее интересны письма и военные приказы, написанные Никол Думаном из Еревана в период происходящих в Закавказье в годы Первой русской революции 1905-1907 гг. кровавых армяно-татарских столкновений.

Развернутая в 1905 г. деятельность Думана в Ереване важна тем, что он смог внести перелом в создавшейся крайне опасной ситуации во всей Эриваньской губернии после жестокой резни армян в Нахиджеване. И, если не чрезвычайные меры Думана, существенная часть армян Араратской долины удостоилась бы участи Нахиджевана. Письма, написанные в эти дни Думаном, показывают, что он правильно проанализировал причины катастрофы

армян Нахиджевана и с помощью продуманных шагов сформулировал такую структуру самообороны, которая позволила нейтрализовать количественные, а во некоторых участках также качественные преимущества противника в существенной части Араратской долины.

В сфере организации боевых групп АРФ Дашнакцутюн, наследство, оставленное непоколебимым арцахским военачальником, совершенно оригинально. Оно является как бы внутренним взглядом на военно-политическое содержание армянского освободительного движения конца XIX - начала XX вв., который с помощью ретроспективного взгляда представляется нам как выкристаллизованный в течение времени ценный опыт для защитников Родины нового поколения по созданию истинно национальной армии.

REFERENCES

Nikol Duman, Namakani, hratarakut'ean patrastut'iwn, khmbagrut'iwn ew tsanot'agrut'yunner **Eruand P'ampuk'eani**, "Vēm matenashar", t'iw 3, Er., "Lusakn", 2021, 336 ēj (in Armenian).